ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյանի հաշվետվությունը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 49-րդ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ

- **Գործուղված անձինք**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

ԱՄՆ/ Նյու Յորք/ 05.03.2018թ. - 09.03.2018թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 49-րդ նստաշրջան

- **Քննարկված թեմաները**

Հանձնաժողովը համարվում է գերագույն մարմին միջազգային վիճակագրական համակարգում, որը քննության է առնում և հաստատում միջազգային վիճակագրական չափորոշիչները:
Տնտեսական և սոցիալական խորհուրդը չափազանց կարևորում է հանձնաժողովի համակարգման գործառույթը և դերը՝ հասնելու միջազգային վիճակագրության հավաքագրման, մշակման և տարածման ինտեգրացված համակարգի:
Վիճակագրական հանձնաժողովի գործառույթների շարքին են դասվում.
- օժանդակումն ազգային վիճակագրությունների զարգացմանը և դրանց համադրելիության կատարելագործմանը,
- մասնագիտացված գործակալությունների վիճակագրական աշխատանքների համակարգումը,
- քարտուղարության կենտրոնական վիճակագրական ծառայությունների զարգացումը,
- վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մեկնաբանման և տարածման հետ կապված ընդհանուր հարցերի վերաբերյալ խորհրդատվության ցուցաբերումը ՄԱԿ-ի մարմիններին,
- օժանդակումը վիճակագրության և վիճակագրական մեթոդների կատարելագործմանը:
1999թ. հուլիսին Տնտեսական և սոցիալական խորհուրդը որոշում է կայացրել, որ սկսած 2000թ. հանձնաժողովը պետք է հանդիպի տարին մեկ անգամ՝ 4 օրով: Հանձնաժողովի հանդիպման արդյունքներով կազմված հաշվետվությունը ներկայացվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի նստաշրջանի քննարկմանը:
Հանձնաժողովի 49-րդ նստաշրջանում քննարկվեցին հետևյալ հիմնահարցերը.

1. Պաշտոնատարների ընտրություն:
2. Օրակարգի հաստատում և այլ կազմակերպական հարցեր:
3. Քննարկման և որոշումների կայացման համար հարցեր.

- տվյալներ և ցուցանիշներ Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար,

- Վիճակագրական կազմակերպության ձեռնարկ,
- բաց տվյալներ,
- տնային տնտեսությունների հետազոտություններ,
- մեծ տվյալներ պաշտոնական վիճակագրության համար,
- տարածաշրջանային վիճակագրական զարգացում,
- ազգային հաշիվներ,
- բնապահպանական-տնտեսական հաշվառում,
- բնական պաշարների վրա հիմնված տնտեսությունների համար վիճակագրություն,
- գյուղատնտեսական և գյուղական վիճակագրություն,
- կլիմայի փոփոխության վիճակագրություն,
- վիճակագրական դասակարգումներ,
- փախստականների վիճակագրություն,
- հաշմանդամության վիճակագրություն,
- աշխատանքի և զբաղվածության վիճակագրություն
- ծերացմանը վերաբերող վիճակագրություն և ըստ տարիքի դեզագրեգացված տվյալներ,
- վիճակագրական հանձնաժողովի աշխատանքային մեթոդները:

4. Տեղեկատվության համար հարցեր.
- ժողովրդագրական վիճակագրություն,
- ըստ սեռի վիճակագրություն,
- աղքատության վիճակագրություն,
- էներգետիկայի վիճակագրություն,
- ծառայությունների վիճակագրություն,
- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների վիճակագրություն,
- միջազգային համադրումների ծրագիր և գների վիճակագրություն,
- թվային առևտրի և էլեկտրոնային առևտրի վիճակագրություն,
- գիտության, տեխնոլոգիայի և ինովացիայի վիճակագրություն,
- ոչ ֆորմալ հատվածի վիճակագրություն,
- շրջակա միջավայրի վիճակագրություն,
- վիճակագրական ծրագրերի համակարգում,
- վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրում,
- կառավարման, խաղաղության և անվտանգության վիճակագրություն,
- Գլխավոր Ասամբլեայի և Տնտեսական և սոցիալական խորհրդի քաղաքականության որոշումներին հետամուտ լինելը:

5. Ծրագրի հարցեր (վիճակագրության բաժին):

6. Հանձնաժողովի 50-րդ նստաշրջանի նախնական օրակարգը և անցկացման ժամկետները:

7. Հանձնաժողովի զեկույցն իր 49-րդ նստաշրջանի վերաբերյալ:

Հայաստանը ելույթով հանդես եկավ հետևյալ հարցերի շուրջ՝ տվյալներ և ցուցանիշներ Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար, մասնավորապես արդյոք Միավորված ազգերին պետք է գլխավոր վիճակագիր՝ կարևորելով նման պաշտոնի ստեղծումը և դրա հորիզոնական ու ուղղահայաց ենթակայության պատասխանատվության ստանձնումը, ինչը դարձել է ավելի կարևոր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70/1 բանաձևի («Մեր աշխարհը փոխակերպելը». Կայուն

զարգացման 2030թ. օրակարգը), որը մանդատ է տալիս Գլխավոր քարտուղարին կայուն զարգացման նպատակների վերաբերյալ տարեկան հաշվետվություն պատրաստելու ՄԱԿ-ի համակարգի հետ համագործակցությամբ՝ հիմնվելով ազգային վիճակագրական համակարգերի կողմից արտադրվող տվյալների և տարածաշրջանային մակարդակով հավաքագրված տեղեկատվության գլոբալ ցուցանիշների շրջանակի վրա, Վիճակագրական կազմակերպության ձեռնարկ՝ շեշտելով ձեռնարկի կարևորությունը որպես համաշխարհային մասշտաբով պաշտոնական վիճակագրության ստանդարտացմանն ուղղված հերթական կարևորագույն քայլը ինչպես որ է վիճակագրական մեթոդաբանության՝ սահմանումների, դասակարգումների, տեղեկատվության աղբյուրների, տվյալների հավաքագրման, ամփոփման ու տարածման գործիքակազմի, պաշտոնական վիճակագրության մոդելային օրենքների պարագաներում, ինչն էլ ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի առաքելությունն է, տնային տնտեսությունների հետազոտություններ՝ կարևորելով տնային տնտեսությունների հետազոտությունների կիրառումը որպես հարուստ տեղեկատվության աղբյուր և առաջարկելով հետազոտության հարցաշարում կարճ հիշողության վրա հիմնված հարցերի ընդգրկումը:

- **Արդյունքները**

Մասնակցությունը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 49-րդ նստաշրջանին հնարավորություն ընձեռեց քննարկելու միջազգային զարգացման նպատակները՝ տվյալները և ցուցանիշները Կայուն զարգացման 2030թ. օրակարգի համար, մասնավորապես, ա) տվյալների հոսքերի վերաբերյալ լավագույն ուղեցույցների և լավագույն փորձի վերաբերյալ աշխատանքը ու Կայուն զարգացման նպատակների համար գլոբալ տվյալների հաշվետվողականությունը, բ) գլոբալ ցուցանիշների շրջանակում որոշ ցուցանիշների տարեկան ճշգրտումները և (գ) հաջորդ տարվա համար աշխատանքի ծրագիրը, ծանոթանալու վիճակագրական տարբեր ոլորտների վերջին զարգացումներին և լավագույն փորձին, ձեռնարկներին, մասնավորապես, Վիճակագրական կազմակերպության ձեռնարկին, ամրապնդելու վիճակագրական համակարգի կարողությունները և խթանելու զարգացումները, կատարելագործելու վիճակագրության տարբեր ոլորտները միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից մեթոդաբանական գործիքակազմին և ստանդարտներին համահունչ, ինչպես նաև քննարկելու համակարգի զարգացման հեռանկարները և հետագա համագործակցության հնարավորությունները:

- **Նշումներ**

2018թ. մարտի 7-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների և ներկայացուցիչների հանդիպումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման հիմնական ուղղությունների և մակրոտնտեսության գծով Կոլեգիայի անդամ-նախարար՝ տիկին Տ. Վալովայայի հետ, որի ժամանակ քննարկվեցին տարբեր հարցեր կապված վիճակագրության ոլորտում համագործակցության

հետագա զարգացման հետ: Աշխատանքային հանդիպման օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգի վիճակագրական ցուցանիշների նախնական ցանկի վերաբերյալ:
2. Փոխազդեցության մեխանիզմի որոշման, ներառյալ՝ սկզբնական վիճակագրական տվյալների օգտագործման նպատակով երկկողմանի վճարային հաշվեկշռի տվյալների համաձայնեցման արդյունքների վերաբերյալ:
3. Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների ազգային վիճակագրական ծառայությունների հետ դրանց կողմից Աշխատանքի վիճակագիրների 13-րդ և 19-րդ միջազգային կոնֆերանսների ընթացքում ընդունված ստանդարտներին համապատասխան աշխատանքի շուկայի ցուցանիշների դինամիկ շարքերի զուգահեռ վարման հնարավորության հարցի ուսումնասիրման արդյունքների վերաբերյալ՝ մինչև 2020թ. փուլի մարդահամարի արդյունքների ստացումը:
4. Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների ազգային վիճակագրական ծառայությունների հետ 2020թ. փուլի մարդահամարի անցկացման ժամանակ միության անդամ-երկրների մարդահամարի հարցաթերթերում աշխատանքային գործունեության և միգրացիայի մոդելային բլոկի հարցերի ընդգրկման առաջարկություններում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության հարցի ուսումնասիրման վերաբերյալ:
5. 2016-2020թթ. ԵԱՏՄ-ի վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման Ծրագրի իրագործման միջոցառումների Պլանի իրականացման ներկայիս իրավիճակի և պլանավորվող գործողությունների վերաբերյալ, մասնավորապես 20 և 22 կետերի:

Հայաստանը գրավոր ներկայացրեց իր մեկնաբանությունները քննարկվող հարցերի վերաբերյալ:

Նստաշրջանի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի ղեկավար՝ տիկին Լ. Բրատանովայի, Եվրամիության Վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) գլխավոր տնօրեն տ. Մարինա Կոտցևայի, Ֆինլանդիայի վիճակագրության գլխավոր տնօրեն տ. Մարյո Բրուունի, Ավստրիայի վիճակագրության գլխավոր տնօրեն պ. Կոնրադ Փեսենդորֆերի, Կանադայի վիճակագրության գլխավոր վիճակագիր պ. Անիլ Արորայի, Խորվաթիայի Հանրապետության վիճակագրության կենտրոնական բյուրոյի գլխավոր տնօրեն պ. Մարկո Կրիստոֆի, Մեքսիկայի վիճակագրության, աշխարհագրության և ինֆորմատիկայի ազգային ինստիտուտի նախագահ պ. Ջուլիո Սանտաելլայի, Միացյալ Թագավորության ազգային վիճակագրության

գրասենյակի ազգային վիճակագիր պ. Ջոն Փուլլինգերի հետ, մասնավորապես Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի և դրա Բյուրոյի հերթական նիստերի օրակարգային հարցերի վերաբերյալ, Դանիայի ազգային վիճակագրական ծառայության Գլխավոր տնօրեն՝ պարոն Յ. Էլմեսկովի հետ, մասնավորապես TAIEX գործիքի ներքո 2018թ. մայիսին ՀՀ ԱՎԾ իր այցելության վերաբերյալ՝ ներկայացնելու վիճակագրական նպատակներով վարչական տվյալների օգտագործման ԵՄ լավագույն փորձը, Նորվեգիայի ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցության բաժնի ներկայացուցիչներ՝ տիկին Լ.Մ. Ռոգներուդի և պարոն Վեբյորն Ալանդլիդի հետ, մասնավորապես համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչ՝ պարոն Մ. Ստեյների հետ, մասնավորապես Գյուղատնտեսական ինտեգրացված հետազոտության (AGRIS) ծրագրում Հայաստանի մասնակցության վերաբերյալ, ԱՄՆ-ի Հաշվառումների Բյուրոյի ներկայացուցիչ՝ պարոն Օ. Ֆիշերի հետ, մասնավորապես մարդահամարի բնագավառում, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության վիճակագրության բաժնի ղեկավար՝ պարոն Շ. Ուպադհյայայի հետ արդյունաբերության վիճակագրության վերաբերյալ, Համաշխարհային Բանկի փորձագետ՝ պարոն Մ. Լապշինի հետ տնային տնտեսությունների հետազոտություններում համակարգչային աջակցությամբ ծրագրային գործիքի կիրառման և մարդահամարին օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ, Բուլղարիայի Հանրապետության Ազգային վիճակագրական ինստիտուտի նախագահ՝ պարոն Ս. Ցվետարսկիի հետ համագործակցության շարունակության համար նոր միջոցառումների վերաբերյալ, Սերբիայի Հանրապետության վիճակագրական գրասենյակի տնօրեն՝ պարոն Միլադին Կովավևիչի և խորհրդական՝ պարոն Սլավկո Կապուրանի հետ, մասնավորապես տվյալների մշակման ինտեգրացված համակարգի շրջանակում համագործակցության վերաբերյալ, որը տվյալների ինտեգրման մեթատվյալների վրա հիմնված հայեցակարգ է, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի նախագահ՝ պարոն Վ. Սոկոլինի հետ՝ 2018թ. սեպտեմբերի վերջին Երևանում ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստն անցկացնելու հարցերը, քանզի 2018թ. ՀՀ ԱՎԾ նախագահն է այդ խորհրդի նախագահը:

ՀՀ ազգային վիճակագրական
ծառայության նախագահ Ս. Մնացականյան